

Տեղեկատվություն

Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2015 թվականի միջոցառումների տարեկան ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1	Բռնության ենթարկված անձանց բացահայտում և պաշտպանություն	Ոստիկանության հետ համատեղ բացահայտվել են բռնության ենթարկված անձիք և նրանց տրվել է համապատասխան աջակցություն (իրավաբանական խորհրդատվություն, հոգեբանական աջակցություն)	Ֆինանսավորում չի պահանջվում
2	Սեռի հատկանիշով բռնության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված սեմինար-պարապմունքներ, կլոր սեղան քննարկումներ	Մարզում ՀԿ հետ (Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, Սեյվ դը Չիլդրեն) համատեղ կազմակերպվել են սեռի հատկանիշով բռնության վերաբերյալ սեմինար-պարապմունքներ, կլոր-սեղան քննարկումներ, որին մասնակցել են գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամներ, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, ոստիկանության ներկայացուցիչներ, առողջապահական հաստատությունների ներկայացուցիչներ: Քննարկումները լուսաբանվել են մարզային լրատվամիջոցներով:	ՀԿ, մարզային լրատվամիջոցներ
3	Կանանց վերարտադրողական առողջության պահպանման և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված իրազեկում	Մարզային գրադարանում կազմակերպվել է կանանց վերարտադրողական առողջության պահպանմանն ուղղված քննարկումներ, որին մասնակցել են 25-35 տարեկան կանայք (գյուղական համայնք) և ծննդօգնության ու վերարտադրողական առողջության բուժօժանայություններ մատուցող մասնագետներ:	Ֆինանսավորում չի պահանջվում
4	“Ընդդեմ սեռի հատկանիշով բռնության ակտիվության 16 օրյակ” հանրապետական քարոզարշավի իրականացում	Ոստիկանության հետ համատեղ բռնություն թեմայով դասընթացներ մարզի դպրոցներում: Մարզային հեռուստատեսությամբ ընդդեմ սեռի հատկանիշով բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների լուսաբանում:	Մարզային լրատվամիջոցներ